

հողագործ հայերի հողային ստացուածքները անձեռնմխելի դարձնել, հայերի հողերը ազատել քրդերի և այլ թափառական ցեղերի յափշտակութիւնից:

Այդ յափշտակութիւնները առաջանում են մասամբ հայ ազգաբնակչութիւնից զանազան տեսակի տուրքեր առնելով և մասամբ ուղղակի կամայական ձևով, ինչպիսի հիմք էլ ունենան, թէկուզ ձևական: Այդ յափշտակութիւններին մասնակցել է հէնց նոյն իսկ ինքը տաճկական կառավարութիւնը, որը յաճախակի հայերի հողերը գրաւել է և յանձնել մահմեդականներին: Իսկ մինչդեռ թէկուզ այն շրջանակների մէջ անցկացրած հողային «Բարենորոգութիւնը», որ կըստիպէր թափառական քրդերին յարգանքով վերաբերուել դէպի Հայկական հողային ունեցուածքը, անկասկած կը յարուցանէր ընդդէմ տաճիկ կառավարութեան Հայաստանի ազգաբնակչեան հէնց այն տարրերը, որոնք վերջին տասնամիակում այնտեղ եղել են նորա գլխաւոր նեցուկը: Հասկանալի է, որ տաճիկ կառավարութիւնը չափազանց տհաճութեամբ կը ձեռնարկէր այդ բարենորոգութեան՝ որը Հայաստանում խաղաղութիւնը վերականգնելու ամենից անյետաձգելի միջոցներից մէկն է երևան գալիս:

Բաղաքական և սոցիալական բարենորոգութիւնները իրագործելու համար, որոնք զեռ կարող են Տաճկաստանը Ասիայում վերակենդանացնել, անհրաժեշտ է ամենից առաջ հաստատուն կազմ, որ ապահովի նորա ազգաբնակչութեանց իրական իրաւանց հաւասարութիւնը: Բայց Տաճկաստանի քաղաքակրթական տնտեսական հաւասարակշռութիւնը, նորա ասիական տիրապետութեանց ազգաբնակչեան ազգային-կրօնական խայտարէտութիւնը և միջազգային դրութիւնը, որի մէջ գանոււմ է Օտոմանեան կայսրութիւնը, յամենայն դէպս այդ տեսակ վերածնութեան հնարաւորութիւնը չափազանց կտակածելի են դարձնում: Ի. Օ. Աելիե:

Ի նկատի առնելով սոյն յօդուածի կարևորութիւնը՝ թարգմանեցինք «Русская Мысль» ամսագրի փետրվար համարից:

Ռարզեկ վարդապետ

ԻՍՍՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ՅՈՒՆԵՆԱՆԸ

Ներսիսեան թեմական Դպրանոցի վարչութիւնը մի գեղեցիկ միտք է յղացել, տօնել Ապրիլի 20-ին իւր երկարամեայ վաստակաւոր ուսուցիչ Ի. Յարութիւնեանի 25 ամեայ ուսուցչական և 30 ամեայ զրական գործնէութեան յօրեկեանը: Ի. Յարութիւնեանը ծնուել է 1863 թ. Ապրիլին թիֆլիսում*): Սկզբնա-

*) Կենսագրականը քաղեցինք «Հորիզոն» Սերժից:

կան կրթութիւնը ստացել է Չորաբաշի եկեղեցու դաւթում գըտնուող Գրիգոր Մատինեանի դպրոցում, ապա մտել է Ներսիսեան դպրոցի I դասարանը և աւարտել է VI դասարանի դասընթացը 1881 թ. կէս տարի նոյն դպրոցի VII մասնագիտական մանկավարժական դասարանում մնալուց յետոյ թողել է դպրոցը, մանկավարժութեան ուսուցիչ Առաքել Բահաթրեանի դպրոցից հեռանալու պատճառով, և գնացել է արտասահման 1883 թ.: Մտել է նախ Այդեմախի ուսուցչանոցը (պրոֆ. Վ. Ռայնի տեսութեան ժամանակ) և ապա լսել է Լայպցիգի և Ենայի համալսարաններում փիլիսոփայական ֆակուլտետի պատմական ու մանկավարժական գիտութիւնները: Երկու կիսամեակ պարնպել է դործնական մանկավարժութեամբ Ենայի համալսարանի մանկավարժական սեմինարիայում ու վարժոցում: 1888 թ. վերջացնելով համալսարանական դասընթացը՝ վերադառնում է Թիֆլիս և ստանձնում է Ներսիսեան դպրանոցում հոգեբանութեան և տրամաբանութեան դասեր: Նոյն դպրոցում աւանդել է հայոց լեզու, հայոց և ընդ. պատմութիւն, Հայաստանի աշխարհագրութիւն և գերմաներէն:

Ուսանող ժամանակն արտասահմանից Ի. Յարութիւնեանը պարբերաբար աշխատակցել է Աբգար Յովհաննիսեանի ձեռքով հրատարակուող «Արձագանք» շաբաթաթերթիին և Մ. Մամուրեանի «Արեւիկան Մամուլին» (Զմիւռնիայում): Արտասահմանից վերադառնալուց յետոյ նա երկար տարիներ շարունակ եղել է «Արձագանք» շաբաթաթերթի և ապա օրաթերթի, «Լոււմայ»-ի ու «Նոր Դպրոց»-ի խմբագրութեան անդամ՝ զետեղելով այդ թերթերում բազմաթիւ մանկավարժական ու բանասիրական յօդուածներ: Աշխատակցել է պարբերաբար «Տարազ»-ին, «Արշալոյս» օրաթերթին, «Ազգագրական Հանդիսին», Մոսկուայի «Գրական Հանդիսին» և այլ ամսագրերի ու թերթերի «Լորդ», «Բրիչ», «Մանկավարժ», «Ուսուցիչ» և այլ ստորագրութիւններով:

Երկար տարիների ընթացքում վարելով ուսուցչութեան ծանր և դժուարին պաշտօնը՝ միաժամանակ նա մասնակցութիւն է ունեցել և մեր հասարակական այլ ասպարէզներում: Նա եղել է հիմնադիր անդամ 1) «Լայպցիգի հայ ճեմարանական ընկերութեան», 2) «Կովկասի Հայ Գրողների ընկերութեան» 3) «Կովկասի հայ ուսուցիչների և վարժուհիների միութեան», 4) «Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկ.» 5) Կովկասի հայոց պատմական ընկ., 6) «Նոր մատենագարան» փոքրիկ հրատարակչական ընկ.:

Ներկայումս նա վարչութեան անդամ է: 1) «Լուսաստանի թանգարանի» 2) «Կովկասի հայ ուսուցչական միութեան», 3) «Կովկասի Հայոց Բարեգ. Ընկ.», 4) «Կովկ. Հայոց Հրատարակչ. Ընկ.» (խմբագրական ժողովի), 5) «Նոր Դպրոց» մանկավարժ.

թերթի և միևնույն ժամանակ պատմասխանատու խմբագիրը Պատասխանատու խմբագիր է նաև «Հանրային մատենադարանի»:

Բացի ներսխեան դպրոցից ուսուցչական պաշտօն է վարել Թիֆլիսի, Գայխանեան և Յովնանեան դպրոցներում, չորս տարի հոգաբարձութեան նախագահ է եղել Թիֆ. Շամբորեցոց եկեղեց-ծխական դպրոցի: Նա եղել է Թիֆլիսի Թեմական դպրոցական խորհրդի անդամ: Երկու շրջան ամենամօտ մասնակցութիւն է ունեցել հայ ծխական և թեմական դպրոցների ծրագիրներ և կանոնադրութիւն կազմելու գործում, նախագահել է ընդհանուր ուսուցչական ժողովները, մասնակցել է էլմիածնում դպրոցական խորհրդակցութիւնները: Հայ դպրոցական կեանքում առաջին անգամ կազմակերպել է հեռաւոր և սիստեմատիկ դպրոցական ճանապարհորդութիւններ, կազմել է դասադրքեր՝ հոգեբանութեան և արեւելքի պատմութեան:

Բացի պարբերական մամուլի մէջ լոյս տեսած բազմաթիւ յօդուածներից, Ի. Յարութիւնեանի ինքնուրոյն կամ թարգմանական աշխատութիւնները, որոնք առանձին գրքերով լոյս են տեսել և որոնց մէջ մեծ տեղ են բռնում մանկավարժական բաժինը՝ սրանք են. 1. Հայոց գիրը (պսակած Իզմիրլեան ամբողջ մրցանակով), 2. Համառօտ տրամաբանութիւն, 3. Գերմանիայի մանկավարժ. բարձրագոյն հաստատութիւններ, 4. ներսխեան դպրոցի 1 դպրոցական ճանապարհորդութիւնը, 5. 11 ճանապարհորդութիւնը, 6. Աշակերտի յուշատետրը, 7. Իմ օրագիրը, 8. Ծաղկոց (մանկ-պարտէզ), 9. Զգացմունք. աշխարհ. «Վէրք Հայաստան»-ի մասին, 10. Ե. Սպիրի, կին վիպագիր, 11. Ստեփաննոս Պալասանեան, 12. Գէորգ Բարխուդարեան կենսագր. և քննադատական, 13. Լէօպոլդ Ֆօն Ռանքէ և հայոց պատմութիւնը, 14. Սանահին, 15. Գոշայ վանք, Գոշ Միխիթարի կենսագրութեամբ, 16. Թէ ճվքեր էին վարդանաց դաստիարակները, 17. 1500 տարի առաջ (հայոց տառերի գիւտը), 18. Հոգեբանութիւն (վիպագրած), թարգմանութիւններ (գերմաներէնից), 19. Պետտալոցցի, Լինհարդ և Գերտրուդ, 20. Ժան-ժակ Ռուսօ, Էմիլ (թարգմ. ընդարձակ յառաջաբանով), 21. Հուքսլէյ՝ բնագիտութիւն, 22. Նաուման, Էրզրում, 23. Պրոֆ. Ռատցել տարերք ազգագրութեան, 24. Սպիրի, վարդ Բեսլին, 25. Ուոենց Յովսէփ, 26. Այծարած Մօնի, 27. Ալպեան հովիւ, 28. Հայրենագրուր, 29. Մ. Եոկայի, Ուրացողը, 30. Տնային բժշկարան, հրատ. բժ. Գ. Բարեանի I և II հատ. ամբողջ կէսը, 31. Ժան Ժակ Ռուսօ, Էմիլ. գիրք երկրորդ, 32. Հին արեւելքի քաղաքակրթութիւնը և հերոսական Յունաստան, 33. Լեման Հաուպտ, Հայաստանն երբեմն և այժմ, 34. Ա. Միւլլէր, Սաղազասիրական պատանեկական գիրք,

Բազմաշխատ և վաստակաւոր ուսուցիչ պ. Իսահակ Յարու-

թիւնեանի այդքան արդիւնաւոր ուսուցչական, գրական, հասարակական գործունէութիւնը ի նկատի առնելով՝ Ներսիսեան դպրանոցի Յորելնական Յանձնաժողովն իրաւամբ իւր կողի մէջ ասում է. «Մեր անմխիթար իրականութեան մէջ պ. Յարութիւնեանի նման համեստ մշակները հազուագիւտ անձնաւորութիւններ են, որ տասնեակ տարիներ կարողանում են դիմանալ կամքի աննկուն ոյժով ամեն տեսակ աննպաստ պայմանների, շատ յաճախ հալածանքների հասնող խոչընդոտների, դիմադրում են ոգևորում բարի գործի զաղափարով և հասարակական պայքարի գիտակցութիւնը սրտնեւրում:

Ի՞նչ աւելի քայքայ պարտականութիւն և վսեմ գործ քան մատաղ անմեղ սերնդի դաստիարակութիւնը, սակայն և սրբան դասնութիւններ ու գրկանքներ, որ կապում են այդ սուրբ գործի հետ յատուկ մեր կեանքի մէջ. դասնութիւններ, որքան շատ շարհերին և շատ կարճ ժամանակամիջոցում յուսահատութեան են հասցրել դպրոցական-մանկավարժական աշխարհում: Շատերն են հրաւիրուել այդ վսեմ և փշուտ ասպարէզը, բայց քչերն են եղել կոչուած ծառայելու: Այդ քչերից մէկն է պ. Ի. Յարութիւնեանը: Նա ասպարէզ է իջել կեանքով ու եռանդով լի, սիրել է իւր գործը և այդ սիրուն զո՛հ է բերել իւր մտաւոր կարողութիւնը, կամքի ոյժը և մաքուր զգացմունքները. և այժօր, տասնեակ տարիների գործունէութեան բեռը ուսերին կանգնած է հասարակութեան առջ պարզբեռ: Հասարակական այդպիսի գործիչների ամենամեծ մխիթարութիւնը գիտակցական երախտագիտութիւնն է. այդ նրանց արդար պահանջն է: Այդ պատճառով էլ Ներսիսեան Դպրոցի Հոգաբարձական և ուսուցչական մարմինները որոշել են սոյն թուի ապրիլ ամսի 20-ին հրապարակական մի հանդէսով տօնել Դպրոցի և հասարակութեան վաստակաւոր և արժանաւոր մշակի մանկավարժական գործունէութեան 25-ամեակը և գրական գործունէութեան 30-ամեակը»:

Ազգիս վեհաբառ Հայրապետն առանձին կոնդակով օրհնել է այս յիւրախ արդիւնաւոր գրական և դպրոցական արժանաւոր մշակին «Արարատի»-ի խմբագրութիւնն էլ իւր կողմից մատուցանում է սրտազին շնորհաւորութիւններ մեղուածջան, վաստակաւոր գաղափարական Յորելեարին և ցանկանում պ. Ի. Յարութիւնեանին դեռ ևս երկար տարիներ շարունակելու իւր արդիւնաւոր գործունէութիւնը ուսուցչական և գրական ասպարիզում: Խմբագրութեան կողմից Յորելեարին ուղարկուեց շնորհաւորական հեռագիր և ներկայացուցիչ նշանակուեց «Արարատ»ի աշխատակից ուսուցիչ պ. Հ. Աուսայեւեանը:

Բ, Վ, Ա.

Դժ մտաւոր կողմաբար չ բացալ ինքնուրուպ մի մասնակցութեամբ զանայն գումար

Գումար զնորդապետն ան ծրար